«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
հինգշաբթի, 23 հոկտեմբերի 2025թ., 14:05

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
9 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Հրահատ Արզումանյան
Վարդան Աթայան
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ
Ռուբեն Ինջիկյան

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Գուրգեն Ղուկասյան
Դավիթ Պետրոսյան
Վաղինակ Ստեփանյան
Արթուր Ապերյան
Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ
ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ Լիլիթ Օվսյան, Հասմիկ Ծատրյան, Տիգրան Հարությունյան
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ ներկայացուցիչ Լիլիթ Ներսեսյան
«ՖԻՆԱՐՄ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի գործադիր տնօրեն Կարեն Զաքարյան
Միջազգային հարաբերությունների գծով Խորհրդի նախագահի խորհրդական Վախթանգ Աբրահամյան
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 23.10.2025թ. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 30.09.2025թ. դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական

կայքէջում, azdarar.am կայքում, հրապարակվել է «Ժողովուրդ» օրաթերթում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել են / տրամադրվել են բաժնետերերին 01.10.2025թ.-ին:
Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 23.10.2025թ.-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 23.10.2025թ.-ին:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 191,254,472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 183,697,151 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 96,05%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր ճանաչված առկա չեն: Քվորումն ապահովված է:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը ողջունեց մասնակիցներին, բացեց նիստը և խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ ներկայացնելու օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հարց 1. Կանոնադրական հիմնադրամի համալրմամբ պայմանավորված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրությունում փոփոխությունները հաստատելու մասին:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ Բանկի զարգացման ռազմավարության շրջանակներում առաջադրված խնդիրների իրագործման նպատակով Բանկի Խորհրդի կողմից որոշում էր կայացվել իրականացնել թվով 3,846,154 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով «Գ» դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ յուրաքանչյուրը 390 ՀՀ դրամ անվանական արժեքով և 390 ՀՀ դրամ տեղաբաշխման արժեքով, բաց բաժանորդագրության միջոցով:

Հրապարակային առաջարկը մեկնարկել էր 12.08.2025թ.-ին և ավարտվել 12.09.2025թ.-ին՝ ողջ առաջարկված ծավալի հաջող տեղաբաշխմամբ:

Լրացուցիչ թողարկման «Գ» դասի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկի կանոնադրական հիմնադրամը կավելանա 1,500,000,060 ՀՀ դրամով և կկազմի 24,925,447,290 ՀՀ դրամ:

Մեսրոպ Հակոբյանը նշեց, որ Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է հաստատել Կանոնադրությունը նոր խմբագրությամբ, և խոսքը փոխանցեց Ժողովի քարտուղար Աննա Բադոյանին՝ քվեարկության արդյունքները ներկայացնելու համար:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 1-ին հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 182,823,235 ձայն, կամ մասնակիցների ձայների 99,52%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 873,916 ձայն, կամ մասնակիցների ձայների 0,48%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով բաժնետերերի ժողովը <u>որոշում կայացրեց</u> հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրությունում փոփոխությունները՝ կանոնադրական հիմնադրամի համալրմամբ պայմանավորված, համաձայն կից հավելվածի, և ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման:

Հարց 2. Փոփոխությունների և լրացումների իրականացմամբ պայմանավորված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

Նախագծերի և ստանդարտների ներդրման գծով Վարչության նախագահի տեղակալ Վաղինակ Ստեփանյանը ներկայացրեց, որ Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական կատարելագործման շրջանակներում առաջարկվում է Բանկի Կանոնադրությունում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ կապված որոշ հոդվածների և դրույթների՝ գործող օրենսդրական

պահանջներին համապատասխան վերաշարադրման, ինչպես նաև տեխնիկական բնույթի մի շարք փոփոխությունների իրականացման հետ: Փոփոխություններն ու լրացումները նախնական հավանության են արժանացել Բանկի Խորհրդի կողմից, Կանոնադրության նոր խմբագրությամբ նախագիծը հասանելի էր Բանկի կայքէջում, հղումը տրամադրվել էր բաժնետերերին:

Ժողովի քարտուղարը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 2-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 182,827,585 ձայն, կամ մասնակիցների ձայների 99,53%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 869,566 ձայն, կամ մասնակիցների ձայների 0,47%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ փոփոխությունների և լրացումների իրականացմամբ պայմանավորված, համաձայն կից հավելվածի, և ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման:

Հարց 3. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը», «Խորհրդի կանոնակարգը» նոր խմբագրությամբ հաստատելու, «Խորհրդի ձևավորման քաղաքականությունը» ուժը կորցրած ճանաչելու մասին:

Վաղինակ Ստեփանյանը ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու և դրանով սահմանված պահանջներն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Բանկի «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգը» վերանայվել է և վերաշարադրվել է որպես Կանոնակարգ, «Խորհրդի կանոնակարգը» ամբողջությամբ խմբագրվել է:

Նշյալ երկու ներքին իրավական ակտերը նախնական հավանության են արժանացել Բանկի Խորհրդի կողմից, դրանց նոր խմբագրությամբ նախագծերը հասանելի էին Բանկի կայքէջում, հղումը տրամադրվել էր բաժնետերերին:

Հաշվի առնելով, որ «Խորհրդի կանոնակարգի» նոր խմբագրությունը ներառում է «Խորհրդի ձևավորման քաղաքականություն» ներքին իրավական ակտով նախատեսված դրույթներ, առաջարկվում է վերջինս ուժը կորցրած ճանաչել «Խորհրդի կանոնակարգի» հաստատվելու դեպքում:

Ժողովի քարտուղարը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 3-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 182,823,235 ձայն, կամ մասնակիցների ձայների 99,52%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 873,916 ձայն, կամ մասնակիցների ձայների 0,48%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց հաստատել «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը», «Խորհրդի կանոնակարգը» նոր խմբագրությամբ, համաձայն կից հավելվածների, ուժը կորցրած ճանաչել «Խորհրդի ձևավորման քաղաքականությունը»:

Հարց 4. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Հրահատ Արզումանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ Խորհրդի անդամ Հրահատ Արզումանյանը դիմում էր ներկայացրել իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ՝ պայմանավորված մի շարք այլ նախագծերում

իր ներգրավվածությամբ և զբաղվածությամբ:

Ժողովի քարտուղարը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 4-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 182,807,297 ձայն, կամ մասնակիցների ձայների 99,52%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 889,854 ձայն, կամ մասնակիցների ձայների 0,48%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց վաղաժամկետ դադարեցնել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Հրահատ Արզումանյանի լիազորությունները՝ իր դիմումի համաձայն, 01.11.2025թ.-ից:

Գագիկ Զաքարյանը Բանկի ղեկավարության և իր անունից շնորհակալություն հայտնեց Հրահատ Արզումանյանին ավելի քան 10 տարվա համատեղ արդյունավետ համագործակցության համար, մաղթեց իր առջև դրված նպատակների բարեհաջող իրագործում և վստահություն հայտնեց բարեկամական հարաբերությունների պահպանման և համագործակցության հետագա զարգացման կապակցությամբ:

Մեսրոպ Հակոբյանը միացավ շնորհակալական խոսքերին և Բանկի Վարչության անունից շնորհակալություն հայտնեց Հրահատ Արզումանյանին Բանկի ռազմավարական զարգացման գործում ունեցած նշանակալի ներդրման համար՝ վստահություն հայտնելով հաջող համագործակցության շարունակականության վերաբերյալ:

Ի պատասխան՝ **Հրահատ Արզումանյանը** բարձր գնահատեց թիմային աշխատանքը և արժևորեց Խորհրդի անդամի կարգավիճակում իր գործունեության ընթացքում փոխգործակցությունը:

Հարց 5. Վախթանգ Աբրահամյանին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ ընտրելու մասին:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով առաջադեմ թվային տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված Բանկի ռազմավարությունը՝ Խորհրդի կողմից առաջարկվում է Բանկի Խորհրդի կազմը համալրել տվյալ ոլորտում բազմամյա փորձ ունեցող նոր անկախ անդամով: Նշեց, որ Վախթանգ Աբրահամյանի թեկնածությունը ներկայացվել էր բաժնետերերի դիտարկմանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 5-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 182,641,743 ձայն, կամ մասնակիցների ձայների 99,43%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 1,055,408 ձայն, կամ մասնակիցների ձայների 0,57%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց ընդգրկել Վախթանգ Աբրահամյանին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի կազմում որպես անկախ անդամ՝ 01.11.2025թ.-ից մինչև 01.11.2026թ. պաշտոնավարման ժամկետով:

Գագիկ Զաքարյանը շնորհավորեց Վախթանգ Աբրահամյանին Բանկի Խորհրդի անդամների շարքերում ընդգրկվելու կապակցությամբ, վստահություն հայտնեց, որ նրա մասնագիտական բարձր կարողությունները և ֆինանսաբանկային համակարգում ունեցած բազմամյա փորձը կնպաստեն նոր նախաձեռնությունների մշակմանն ու իրականացմանը:

Մեսրոպ Հակոբյանը նույնպես շնորհավորեց Վախթանգ Աբրահամյանին Բանկի Խորհրդի անդամ ընտրվելու կապակցությամբ և վստահություն հայտնեց, որ ավելի վաղ մեկնարկած նախագծերը արդյունավետ

կշարունակվեն վերջինիս նոր կարգավիճակի շրջանակներում:
Օրակարգի 4-րդ և 5-րդ հարցերով կայացված որոշումների կապակցությամբ կկատարվեն անհրաժեշտ գործողությունները՝ կապված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ղեկավարների կազմում փոփոխությունները ՀՀ Կենտրոնական բանկում գրանցելու հետ:

Վախթանգ Աբրահամյանը շնորհակալություն հայտնեց շնորհավորանքների համար և նշեց, որ կգործադրի բոլոր ջանքերը՝ սահմանված խնդիրների արդյունավետ իրագործման համար:

Աննա Բադոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են, դիմեց հարցեր տալու առաջարկով: Հարցեր չինչեցին:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և ավարտեց բաժնետերերի ժողովը ժամը 14:20:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 23 հոկտեմբերի 2025թ.